ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1965 Общественные науки

Ջ. Հ. Ղուկասյան

«ՄԽԻԹԱՐ ՍՊԱՐԱՊԵՏ» ՊԱՏՄԱՎԵՊԸ

Հայրենական պատերազմի ժամանակաշրջանում օրինաչափ և առանձնահատուկ զարգացում ապրեց սովետահայ պատմավեպը։ Կյանքը գրականության առաջ կենսական պահանջ դրեց անցյալի ազատագրական կռիվների գեղարվեստական իմաստավորման միջոցով հայրենասիրական կոչ ուղղել ժամանակակից սերունդներին՝ պաշտպանելու ձեռք բերված նվաճումները։

Երեմիա Դեմիրճյանի «Վարդանանք» և Ստեփան Զորյանի «Պապ թագավոր» վեպերը կյանք մտան ոչ միայն որպես ինքնին գեղարվեստական երկեր իրենց «անհատական» խնդիրներով՝ գեղարվեստական-դաստիարակչական ու ճանաչողական նշանակությամբ, այլև լուրջ ազդեցություն ունեցան սովետահայ գրականության հետագա պրոցեսի, մասնավորապես սովետահայ պատմավեպի զարգացման վրա։

Վերջին տասնամյակում՝ 1954—1964 թթ. հրատարակվեցին Մովսես Արազու «Իսրայել Օրի», Ստեփան Զորյանի «Հայոց բերդը», Հովհաննես Ղուկասյանի «Ոսկան Երևանցի», Զարգանդ Դարյանի «Սայաթ-Նովա» և վերջապես Սերո Խանդադյանի «Մխիթար սպարապետ» պատմավեպերը։ Թվարկեցինք միայն այն երկերը, որոնք վերարտադրում են դարերի հնություն ունեցող իրադարձությունները։ Եթե «պատմավեպ» սյունակի տակ դնենք նաև այս դարասկզբի պատմական անցքերին նվիրված երկերը, ապա այստեղ տեղ կգրավեն բազմաթիվ ծավալուն երկեր՝ Նաիրի Զարյանի «Պարոն Պետրոսն ու իր նախարարները», Աղավնու «Շիրակը», Վ. Ատրյանի «Արյունոտ քառուղիները», Գուրգեն Մահարու «Երիտասարդության սեմին», Ռաֆայել Աթայանի «Զարթոնքը» և այլն։

Զարգանդ Դարյանի «Սայաթ-Նովա» և Հովհ. Ղուկասյանի «Ոսկան Երևանցի» պատմավեպերը թեմայով և ժանրային առանձնահատկություններով տարբերվում են տրադիցիոն պատմավեպից։ Նրանք նվիրված են ոչ թե ժողովրդի ազգային-ազատագրական կռիվներին, պատմական կամ հեղափոխական անցքերին, այլ հայ ժողովրդի այն առանձին նշանավոր մարդկանց, որոնք մեծ դեր են կատարել նրա կուլտուրայի ու արվեստի զարգացման մեջ։ Մինչդեռ նոտպատերազմյան պատմավեպում Սերո Խանդադյանի «Մխիթար սպարապետը» հայ գրողների ավագ սերնդի ներկայացուցիչներ Արազու և Ստեփան Զորյանի պատմավեպերի կողքին տրադիցիոն պատմավեպ է։ Նա գաղափարով ու ներշնչանքով սերտորեն կապված է ոչ միայն «Վարդանանքի» և «Պապ թագավորի», այլև «Վերք Հայաստանի», «Դավիթ Բեկի», «Սամվելի», «Գևորգ Մարզպետունու» հետ, նրանց հարազատ և օրինական ժառանգն է։

Բայց եթե այս վեպը իր նախորդների միայն շարունակությունը լիներ պատմաշրջանի առումով և մեթոդական-ստեղծագործական հատկություններով, ապա փոքր կլիներ նրա նշանակությունը և դժվար բացատրելի այն լավ ընդունելությունը, որ նա գտավ թե՛ գրական շրջաններում և թե՛ ընթերցողների լայն խավերի մեջ։

Հայ պատմավեպի հիմնական բովանդակությունն այն է, թե ինչպես ժողովուրդը, դարել շարունակ ենթարկվելով զորեղ դավթիչների ասպատակություններին, ընկնելով նրանց լծի տակ, երբեք չի դադարել իր ազգային ազատագրության համար պայքարելուց։ Հզորներն իրենց հավասարների հետ բախվելիս էլ հոշոտել են փոքր ժողովուրդներին, ամենից հաճախ հայերին, և դարձյալ այդ փոքր ժողովուրդը գերմարդկային ճիգեր է գործադրել դուրս գալու համար անկախ և ազատ գոյատևելու ճանապարհը։

Հարազատ մնալով իրականությանը, հայ պատմավեպը ցույց է տվել, թե ինչպես «հայրենին» պաշտպանելու ժամանակ բորբոքվել են ժողովրդի գլուխ կանգնած մարդկանց կրքերը, խախտվել է իշխանների ու նախարարների միասնությունը, կազմվել են խմբակցություններ, որոնք հաճախ իրար դեմ կենաց ու մահու կռիվներ են մղել, եղել է դավաճանություն, կոտորած՝ յուրայինների ձեռքով։ Պատմական հանգամանքների բերումով միշտ չէ, որ պարզ է եղել, թե օտարի լծից, ֆիզիկական բնաջնջումից և բռնություններից ազատվելու համար փոքր հայ ժողովուրդը ո՞ր միջոցը պետք է ընտրեր՝ ինքնուրույն դիմադրությո՞ւնը, թե՞ որևէ հզոր տերության հարելու, նրա հովանավորության տակ անցնելու քաղաքականությունը։ Թեև պատմությունը

բազմիցս հաստատել է, որ օտար տիրակալները խաբում են նրան, բայց հայ ժողովուրդն իր փոքրաթիվության պատճառով հաճախ է կանգնել այդ երկրներտրանքի առաջ և նրա գլուխ կանգնածների աչքը հաճախ է հառած մնացել որևէ հզորի պալատի դռներին՝ ու դեսպանների շուրթերին։ Ի՞նչ անել, դիմադրել ու նահատակվե՞լ, թե՞ հպատակվել ու սպասել հարմար առիթի, կամ գուցե հաշտվել իսպառ ոչնչանալու, որպես առանձին ազգային միավոր, ժողովուրդ, գոյություն ունենալու գաղափարի հետ։

«Մխիթար սպարապետ» վեպի բովանդակությունն ու ընդհանուր տրամաբանությունը առանձին տարբերություն չունի վերը նշվածից։ Բայց այստեղ նորություն և թարմություն կա պատմական անցքերի նկատմամբ մոտեցման և նրանց մեկնաբանության, գեղարվեստական իմաստավորման մեջ, որը պատկերվող բարդ ժամանակաշրջանի հասարակական, պետական ու քաղաքական հարաբերությունների լայն և խոր ընդգրկման հետ «Մխիթար սպարապետը» դարձնում է նշանակալի երևույթ սովետահայ պատմավիպագրության մեջ։

Հայ պատմավեպը, հավատարիմ ժողովրդական գաղափարներին, միշտ խրախուսել է դիմադրության ճանապարհով հարատևելու ձգտումները։ Այդպես է, օրինակ, «Վարդանանքում»։ Բայց «Վարդանանքի» մեջ դիմադրությունը երբեմն մասնավորացվում և դիտվում է որպես նահատակություն։ Հայ ժողովուրդը իր գոյության, անկախության համար կռվելով, պետք է նահատակի ինքն իրեն, զոհարերի ամբողջ սերունդներ, մինչև որ պատմության ուղիներում մի լուսավոր դուռ բացվի նրա համար։ Հազկերտի դեմ ապստամբության վճիռ կայացնելուց առաջ Վարդան Մամիկոնյանը մտածում է. «Դաժան դժվար է հայոց ժողովրդի փրկությունը, նահատակությունն է նրա փրկությունը, տևական, սերնդե-սերունդ նահատակություն, մինչև կբացվի ճշմարիտ ազատության դուռը»[1]։

Ինչպե՞ս է լուծվում ազգային ազատագրական պայքարի այս ամենակարևոր հարցը «Մխիթար սպարապետ» վեպում, ո՞րն է տվյալ դեպքում նորությունը կոնցեպցիայի մեջ։

Գրեթե նույն բանն է մտածում Դավիթ Բեկը թուրքական բանակի դեմ ճակատամարտելուց առաջ. «Որտե՞ղ է վերջը։ Սկիզբը եղավ, վերջը՝ ոչ, չի երևում։ Կապրեն այդպես կռվելով, ազգովի դիմադրելով այն արհավիրքներին, որ դարեր անվերջ գալիս է հայոց աշխարհի վրա։ Կդիմադրեն բոլորը՝ սերնդե-սերունդ, մինչև մի տեղ վերջանա արհավիրքը... Այդպես է եղել ի սկզբանե ճանապարհը հայոց»[2]։

«Մխիթար սպարապետը» ավարտվում է հետևյալ խոսքերով. «Նոր թշնամիներ էին գալիս հայոց աշխարհի վրա, ու նոր քաջեր էին նրանց դուրս մղում իրենց հինավուրց հողից։

Մի սերնդին փոխարինում էր մյուսը...

Այսպես ապրեցինք դարեր...»։

Չնայած գաղափարների այս նմանությանը, ինչպես վերը բերված տողերից, այնպես էլ մանավանդ վեպերի ընթացքից երևում է, որ «Մխիթար սպարապետի» հեղինակը պաշտպանում է և հավատում դիմադրության միջոցով ապրելու, հարատևելու հնարավորությանը։ Նահատակությունը միակ ուղին չէ, կա հաղթանակի հավատով լի պայքարի ուղի։ Հենվել հայրենի հողին, մաշել, հյուծել հակառակորդի ուժերը, և ապա դուրս շպրտել նրան, անկախություն ձեռք բերել, զարգացնել ժողովրդի շինարար ոգին, ստեղծել նյութական ու հոգևոր հարստություններ։ Փոքր ժողովուրդների ազատագրական պատերազմների վերաբերյալ այս կոնցեպցիան թե՛ պատմությանը հարազատ մնալու և թե՛ ժամանակակից գաղափարների տեսանկյունից ավելի ուսալ է, կենսական և ճշմարիտ։

Մյուս պատմավեպերի համեմատությամբ նորություն և ինքնատիպություն կա նաև այս պրոբլեմի գեղարվեստական լուծման մեջ։ Սերո Խանզադյանն ավելի, քան մյուս պատմավեպերի հեղինակները, աշխատել է ազգային ազատագրական պայքարի ընթացքն ու ելքը պատկերել սոցիալական ուժերի հարաբերության հետ ունեցած նրանց կապի մեջ, ավելի խորը գնալ դեպի ազատագրական շարժումների սոցիալական արմատները։ Եթե Բաֆֆին և մյուս նշանավոր հավիպասանները համարձակ կերպով նշելով սոցիալական անհավասարությունից բխող հակասությունները, միաժամանակ պատմության զարգացման մեջ չեն բացահայտել դրանց դերը, այլ շեշտը դրել են պատմական գործիչների, նրանց անհատական հատկությունների վրա, չեն հասել նրանց գործունեության դասակարգային դրդիչներին, ապա «Մխիթար սպարապետ» վեպում պատմական գործիչների վարքագծի հիմքում միշտ երևում են դասակարգային հարաբերությունների առանձնահատկությունները, կարևոր իրադարձությունների և հերոսների արարքների՝

---

1 Դ. Դեմիրճյան, Վարդանանք, երկրորդ գիրք, Երևան, 1946, էջ 140։

2 Սերո Խանզադյան, Մխիթար սպարապետ, երկրորդ հրատարակ., 1963, էջ 438։

ներանցով պայմանավորված լինելը։ Հերոսը իր ժամանակի, տվյալ սոցիալական խավի, կոնկրետ հասարակական միջավայրի արդյունք է և նրա բնավորությունն ու գործունեությունը խորը սոցիալական պատճառներ ունեն, կապված են այս կամ այն սոցիալական շերտի, նրա առաջավոր, կամ հետամնաց գաղափարների, նրա ձգտումների ու տրամադրությունների հետ։ Այս սկզբունքով են ստեղծված վեպի գլխավոր հերոսները։

Ինչո՞վ է պատճառաբանված Մելիք Բարխուդարի «զարհուրելի» դաժանությունն իր ճորտերի նկատմամբ, ինչպես է պատահում, որ մելիքը դաղտնաբար հարձակվում է Պղնձաքարի վրա՝ Մխիթար սպարապետի նոր ստեղծած մելիքությունն իսպառ ոչնչացնելու նպատակով։ Ճիշտ է, Բարխուդարի բնավորության մեջ դգացվում է նաև «ցույց տուր ինձ մի մարդ, որ իր կրքերի դերին չլինի» շեքսպիրյան նշանաբանի ազդեցությունը, բայց միաժամանակ Բարխուդարի բնավորությունը ֆեոդալական ամբողջ դասի համար հատկանշական բնավորություն է, նրա սոցիալական էության հաստատումը։ Բարխուդարի, որպես պահպանողական, դաժան մելիքի ներքին էությունը մերկացնելու գործում ոչ մի ջիջում չի արված։ Նախնիների մեջ դարերով սնված ու ամրացած հասկացողությունները՝ լավագույն հողերին տիրելու, իշխելու, իր հարստության ու արտոնությունների նկատմամբ ամենափոքր «ոտնձգությունն» անգամ դաղանաբար ճնշելու կրքերն այնքան հախուռն ու անդուսպ են Բարխուդարի մեջ, որ մարդասպանության են մղում։ Բարխուդարի առաջին հոգսը ոչ թե ժողովրդի, «ազգի» բարօրությունն է, ինքնուրույն պետության ստեղծումը, միասնությունը, թեև նա հաճախ է իր «տիրասիրությանը» մասին հավաստիացումներ անում, այլ իր մելիքական արտոնությունների պահպանումն ու անսասանությունը։ Ուժի հասկացողությունն էլ նրա մեջ յուրահատուկ է և տիպական. «Իմացիք։ Ուժը աստծուց արդար է, աստծուց զորավոր»։ Բարխուդարն ի նկատի ունի իրեն տված այն ուժը, այն արտոնությունը, որով անպատիժ կերպով կարող է դատաստան տեսնել իրավազուրկ ճորտերի հետ։ Մխիթար սպարապետի և Բարխուդարի միջև ընդհարումները, ինչպես նաև հաշտությունը, որը սկզբում անհնարին է թվում, տեղի են ունենում միշտ նույն պատճառով՝ հարստությունը մեծացնելու, մելիքական արտոնություններն ընդարձակելու և պահպանելու համար։ Բարխուդարն ամենավճռական պահին հավատարիմ է մնում Մխիթարի քաղաքականությանը դարձյալ այն պատճառով, որ համոզված է, թե պարսիկները կամ թուրքերը իրենց տիրապետությունը հաստատելով Հայաստանում, կթուլացնեն կամ կջնջեն մելիքությունները, նրանց հարստությունը կբաժանեն իրենց փաշաներին և այդպիսով Բարխուդարի ոչ միայն հարստությունը, այլև տոհմը կարող է իսպառ անհետանալ։

Մելիք Մուսիի համար նույնպես ամենակարևորը իր ունեցվածքի պահպանությունն է։ Բայց պայմանները մի կողմից, մելիք Մուսիի բնավորությունը՝ մյուս, նրան այդ պաշտպանությունն իրականացնելու այլ մեթոդներ են թելադրում։ Եթե Բարխուդարի մեջ իր մելիքությունն ու տոհմը պահպանելու ձգտումը վերջում համատեղվում է հայրենիքի անկախության պահպանության հետ, ապա մելիք Մուսիի հետ կատարվում է ճիշտ հակառակը։ Նա դառնում է դավաճան, Ագուլիսի դռները բացում է թշնամու առաջ, հույս ունենալով այդ ճանապարհով կոտորածի ու թալանի առաջն առնել, քաղաքը պահպանել, եթե նույնիսկ դրանով կնպաստի թշնամու ուժեղացմանն ու Հայաստանի մյուս քաղաքների գրավմանը։ Մուսին չի տատանվում անգամ կնոջ ողբերգական մահը տեսնելով, որը տեղի է ունենում հայ հայրենասեր զորականներին դավաճանաբար թշնամու ձեռքը հանձնելու պատճառով։ Նույն դասի մարդկանց այդպիսի հակադիր գործելակերպը ոչ միայն չի հակասում պատմական ճշմարտությանը, այլև նրանով է պայմանավորված և ավելի խորն է պատկերում ժամանակի տիրապետող հասկացությունները։

Ժողովրդի ազգային ազատագրության ուղին որոշելու մեջ սոցիալական ֆակտորի դերի բացահայտման և ֆեոդալական դասակարգի գեղարվեստական նկարագիրը տալու տեսակետից վեպն ավելի մեծ մասշտաբի ճշմարտության է հասնում Տեր-Ավետիսի կերպարի շնորհիվ։ Տեր-Ավետիսը մելիք է մասամբ միայն, կնոջ կալվածների շնորհիվ։ Նա նաև հոգևորական է։ Դժբախտաբար գեթ համառոտ կերպով, պատմական ասպեկտով չեն պարզված Տեր-Ավետիսի հոգևորական և ապա նշանավոր զորավար դառնալու հանգամանքները, ըստ երևույթին հեղինակը հույսը դրել է այն փոքր տեղեկությունների վրա, որ կան պատմական աղբյուրներում և Բաֆֆու «Դավիթ Բեկ» վեպում։ Բայց այն, ինչ որ ցույց է տրված վեպի զարգացման ընթացքում, դարձյալ պերճախոս է պատմական իրողության նուրբ ծալքերի հետազոտության տեսակետից։ Հայ պատմավեպը, մանավանդ հանձինս «Սամվելի», «Գեորգ Մարզպետունու», «Վարդանանքի», «Պապ թագավորի» և «Դավիթ Բեկի», հարուստ է «ուրացողներին» կերպարներով։ Դրանցից ոմանք հավատափոխությամբ», ոմանք մտածված ու փորձված խարդախություններով ծախել են ժողովրդի և հայրենիքի շահերը։ Բայց Տեր-Ավետիսը տրադիցիոն դավաճաններից չէ։ Նրա կյան-

քում ևս լինում են դեպքեր, երբ մտածելով միայն որպես մելիք, նեղ-դասակարգային շահերին գերի մնալով, ներքուստ ծառանում է Մխիթար սպարապետի դեմ, զայրանում է իրեն պատկանող գյուղում առանց տիրոջ կամքը հարցնելու կարգագրություններ անելու համար, դժգոհ է այն բանից, որ կարող էր ինքը լինել գահերեց, մինչդեռ Մխիթարն է դարձել: Բայց Տեր-Ավետիսի մեջ այս մտքերի դեմ կռվի մեջ են մտնում նրա այլ մտքերը, երկիրը և ժողովուրդը փրկելու, արյունահեղությունը դադարեցնելու անկեղծ հոգսը: Այստեղ արդեն Տեր-Ավետիսը վեր է բարձրանում իր դասի սահմանափակությունից, արտահայտում է ժողովրդի և ֆեոդալների այն առաջավոր մասի գաղափարները, որ նրանց հատուկ էին պատմական տվյալ ժամանակաշրջանում: Այս ասպեկտով են պատկերված մի քանի ուրիշ մելիքներ, որոնք անձնվիրաբար առաջնորդում են զորքին ու ժողովրդական աշխարհազորին՝ թուրքերի դեմ մղվող անհավասար կռիվներում: Տեր-Ավետիսը չի կարող պարծենալ ոչ իր տոհմի հնությամբ, ոչ մեծ հարստությամբ, ինչպես ասենք, Վասակ Սյունեցին («Վարդանանք»): Եվ Տեր-Ավետիսի մեջ տստանումներն ու դավաճանությունն էլ չեն առաջանում և զարգանում այնպես ուղղագիծ, ինչպես Վասակի մեջ: Վասակը երազում է «անկախ, ուժեղ հայոց տերություն», բայց դրան հասնելու համար ընտրում է «պարսկանալու» ճանապարհը: «Պարսկանանք, որ հայանանք»: Նա գտնում է, որ պետք է ատել «ստրուկի», «շողոքորթի, ստորացածի» ատելությամբ և հետո միայն վրեժ լուծել պարսիկներից այդ բոլոր անարգանքների համար: Նա որոշում է Վարդան Մամիկոնյանին «հանել ճանապարհից», ժողովրդին խնայելու մասին երբեք չի էլ մտածում: Մինչդեռ Տեր-Ավետիսը ստոր դավաճան, փառամոլ դառնալուց հետո էլ հաճախ մտածում է ժողովրդի մասին, հանդես է բերում քաջություն, դիվանագետի տաղանդ: Հալիձորի պաշտպանության մասին նրա մտորումներն անկեղծ հայրենասերի, հավատարիմ ընկերոջ, մարդասեր անհատի մտորումներ են: Եթե Հալիձորի տակ մի ճակատամարտ էլ շահեն, դա նրանց վերջնական հաղթանակ չի բերի: Նրանք առաջվա պես շրջապատված են թշնամի պետություններով, ռուսները չեկան օգնության, չկա տաղանդավոր զորավար Դավիթ Բեկը: «Ինչու խաբել այս անօգնական ժողովրդին և կորստյան մատնել մինչև վերջին ջրաղացպանը»[3]: Հալիձորի դռները բանալուց առաջ Տեր-Ավետիսը երդմնագիր է վերցնում փաշայից, որ ձեռք չի տա քաղաքին, մարդկանց, չի ասպատակի գավառները: Նույն ժամանակ նա հայտնում է Մխիթարին, որ հեռանա Հալիձորից, «գլուխն ազատի»: Վեպի վերջում Տեր-Ավետիսը զղջում է ոչ թե որպես դավաճան, այլ որպես մոլորված, որպես թշնամու նենգությունը մեծահոգության տեղ ընդունած մարդ: Նրա բնավորության այս էվոլյուցիան և ծայրահեղ հակասությունները պատմաշրջանի յուրահատուկ պայմանների և սոցիալական հակասությունների արդյունք են: Տեր-Ավետիսի կերպարի շնորհիվ Սյունիքի մելիքության, որպես, մի կողմից երկրի կյանքում կարևոր գեր կատարող սոցիալական ուժի, մյուս կողմից արատավոր հատկություններ կրողի, պատկերը իր հարուստ արտահայտությունն է ստացել:

Սոցիալական կոնտրաստները շեշտելու հեղինակի ձգտումը տեղ-տեղ վեպը տանում է դեպի ճշգրիտն ու կոնկրետը, հասցնելով նատուրալիզմի և հեռացնելով տիպականից, խտացված ճշմարտությունից: Այդպես է, օրինակ, Պղինձ Արթինի, նրա հանքերի և այնտեղ աշխատող մարդկանց վիճակի պատկերումը: Դրանք ավելի վաղ միջնադարի պատկերներ են, քան 17-րդ դարի: Բայց ընդհանուր առմամբ «Մխիթար սպարապետ» վեպը պատմասոցիալական վեպ է, և այս իմաստով տալիս է իր ժամանակի ավելի ռելիեֆ պատկերը: Դա երևում է նաև Դավիթ Բեկի կերպարից:

Ինչպես հայտնի է, «Մխիթար սպարապետը» դեպքերի ժամանակաշրջանի իմաստով Բաֆֆու «Դավիթ Բեկի» շարունակությունն է: Եվ բնական է, որ թեև նրա գլխավոր հերոսը Մխիթար սպարապետն է, բայց Դավիթ Բեկի կերպարը վեպում գրավում է կենտրոնական տեղ: Սակայն «կենտրոնականն» այստեղ միայն վիպական սյուժեի մեջ կատարած դերի կամ էջերի քանակի իմաստով չի ասվում, այլ կերպարի բացահայտման, ամբողջացման: Բաֆֆու վեպում ևս, բայց միայն սկզբի մասում, պատկերված է Դավիթը որպես իր ժողովրդի լավագույն որդիներից մեկը, նրա բախտով և նրա համար ապրող մի զորական: Բայց հետագա կարևոր և վճռական դեպքերի մեջ՝ Զեվու բերդի գրավման, մելիք Ֆրանգյուլի և խանի դեմ մղված կռվի,—այդ հերոսը ցույց չի տրված, նրա, որպես շարժման ղեկավարի, ոգեշնչողի դեմքը չի երևում: Սերո Խանդաղյանի վեպում Դավիթ Բեկն արդեն գահերեց զորավար է, «ավերակների վրա ստեղծված նորաբույս իշխանության» գլուխը: Դավիթ Բեկի կերպարի մեկնաբանության նորությունը նույնպես կապված է վեպի հիմնական կոնցեպցիայի հետ՝ պատմական անցքերը ցույց տալ նրանց սոցիալական շարժիչների հիմքերով, մարդկանց՝ իրենց սոցիալ-հոգեբանական կողմերով: Դավիթ Բեկը այն

3 Նույն տեղում, էջ 642:

զորավարներից կամ պետական գործիչներից չէ, որոնք այդ առտիճանին հասնում էին շնորհիվ այն բանի, որ պատկանում էին արտոնյալ դասերին, նա դուրս է եկել ժողովրդից և այդ առումով բացառություն է։ Եվ ահա Դավիթ Բեկը ցույց է տրված ոչ միայն որպես պետական մարդ, բնությունից օժտված անձնավորություն, այլև որպես ժողովրդի մարդ, այնպիսի հոգեբանությամբ, գործելակերպի այնպիսի ուղղությամբ, վարք ու բարքով, սովորություններով, որոնք բնորոշ են նրա սոցիալական էությանը։ Դավիթ Բեկին իորթ են ռոմանտիկական երազանքը, վերացական գաղափարները, դերգայնությունն ու հոգեկան տատանումները։ Նա դեպի իր նպատակը գնում է հետևողական, անկոտրում գործնականությամբ, միշտ մեծ սկզբունքների շահերին հետամուտ։ Անսահման սերը մտիկների և ժողովրդի նկատմամբ Դավիթ Բեկի մեջ չի թուլացնում իրավացի պատժողին և ժողովրդի շահերի համար խստություններ գործադրողին։ Պետական գաղտնիքը նույնիսկ սպարապետին հայտնող զինվորը հետևյալ օրը կախաղան է հանվում։ Այդպես է պատժում Բեկը պետական գործի նկատմամբ անզգուշությունն ու բերանբացությունը։ Որքան էլ որ Դավիթ Բեկը լավատես է, բայց նրա մեջ միշտ արթուն է գործիմաց հաշվենկատությունն ու հետագա դեպքերը դուշակելու ձգտումը։ Ընդհանուր ուրախության, հույսերի իրականացման վառ տրամադրությունների օրերին միայն Դավիթ Բեկն է, որ տատանվում է հայտնել ի լուր ամենքի, թե Պետրոս թագավորը զորք է ուղարկում Հայաստան և Վրաստան և մոտ է հայ և վրաց ժողովուրդների ազատագրության ժամը։ Կշռադատելով պետությունների հարաբերությունները և նրանց գործելակերպը, նա հասկանում է, որ ռուսաց թագավորը ներկա էտապում կարող է և չանել այդ քայլը։ Կյանքի մեծ փորձը, թշնամիներին և բարեկամներին լավ ճանաչելու շնորհքը, բնական խելքը և նվիրվածությունը ժողովրդական գործին՝ ձուլված են Դավիթ Բեկի մեջ։ Ինչպես նա բացառիկ է իր ճակատագրով, կյանքի և գործունեության պայմաններով, այնպես էլ բնավորությամբ և տաղանդով։ Բայց նա տիպական ու ճշմարտացի է հենց այդ իր բացառիկությամբ։

Դավիթ Բեկին բնորոշ չեն պալատական սովորություններն ու նիստ ու կացը։ Նա մի զորավար է, որն իր բազմատանջ ժողովրդի համար կարողացել է անկախություն նվաճել, զրկելով իրեն մարդկային կյանքի տարբերական հարմարություններից։ Նա անձնական կյանք չունի, նրա բոլոր մտքերն ու զգացումները միշտ կապված են այն բարդ ու տանջալից խնդրի հետ, թե ինչպես պետք է ազատ պահել երեք սրի արանքում գտնվող այն փոքրիկ հողակտորը, որ կոչվում է Հայաստան։ «Այն երկիրը, որի ձեռքին սրի փոխարեն խաչն է՝ կկործանվի»։ Այս սկզբունքին հետևելով էլ Դավիթ Բեկը ամեն անգամ դժվար պահերին որոշում է իր վերաբերմունքն ու քաղաքականությունը հայ եկեղեցու, մելիքների, ժողովրդի նկատմամբ, այդ նշանարանով է նա վարում իր փոքրիկ պետության ներքին ու արտաքին քաղաքականությունը։ Այսպիսով «Մխիթար սպարապետ» վեպը կատարեց պատմավեպի համար մի կարևոր խնդիր ևս—տվեց պետական գործչի հարուստ և համակրելի կերպար։

Դավիթ Բեկին վեպում վերագրված է հատուկ արվեստասիրություն։ Դրա համար շատ տեղ է տրված Բեկի և Նադաշ Հակոբի հարաբերություններին։ Բայց այս գիծը չի բխում Բեկի կերպարի ընդհանուր տրամաբանությունից, բռնազբոսիկ կերպով է հարմարեցված և արտաքին սյուժեին ավելի կարևորություն է տրված։ Այս բանն աչքի է զարկում մանավանդ այն պատճառով, որ վեպի երկրորդ հրատարակության մեջ փոփոխությունները գնացել են նախորդ հրատարակության մեջ տեղ գտած թեպետև հետաքրքիր, բայց արկածային սյուժեների և կերպարների կրճատման ուղղությամբ. օրինակ հանված է Բուրթելին վերաբերող ամբողջ մասը։

Մխիթար սպարապետի և Դավիթ Բեկի հարաբերությունների մեջ բազմակողմանի ու կենդանի են ցույց տրված այդ հերոսների բնավորությունների տարբերությունները և Սյունիքի ապրստամբության մեջ նրանց խաղացած պատմական դերը։ Բայց վեպի մի քանի դրական հերոսների հարաբերությունների մեջ կան աղոտ կետեր։ «Դավիթ Բեկի» մեջ պատմագեղարվեստական լուսաբանություն չի ստացել այն հարցը, թե ի՞նչ հանգամանքներում, ինչո՞ւ էին ձագեձորցի Մխիթարը և սյունեցի Բայանդուր իշխանը գնացել Վրաստան, ի՞նչ էին անում այնտեղ, ի՞նչպես էին հանդիպել Դավիթ Բեկին և կամ ի՞նչպես առաջացավ բարեկամությունն այդ պատմական անձնավորությունների միջև։ Չունենալով այս հարցերի մասին պատմական սպառիչ տեղեկություններ, Բաֆֆին դիմել է միայն իր երևակայությանը։ Սերո Խանզադյանն այստեղ ուղղել է Բաֆֆուն։ Մխիթարն ու Բայանդուրը Վրաստան չեն գնացել և այնտեղ չէ, որ ծանոթացել են Դավիթ Բեկի հետ։ Սակայն Սերո Խանդադյանը նույնպես չի տվել այս հերոսների բարեկամության սկզբնավորումն ու պատմական հանգամանքները։ Պարզված չեն նաև Մխիթար սպարապետի և Տեր-Ավետիսի հատկապես շեշտված փոխադարձ նվիրվածության ու հավատարմության ակունքները։

Հայ պատմավեպը, այդ թվում նաև սովետահայ պատմավեպը, մեծ հաջողության չի հասել ժողովրդի մարդու, շինականի, ճորտի ոչ կյանքը պատկերելու, ոչ բնավորությունը կերտելու

տեսակետից։ Սերո Խանզադյանի վեպը Փոքր Գիորգու, Զարմանդի, Պլնձաքարի տանուտերի և այլ կերպարներով միայն մոտեցել է այդ խնդրի կատարմանը։ Ցածր սոցիալական խավերից ելած մարդու, նույնու կերպարը թերի է պատմությանը հարազատ մնալու տեսակետից։ Որպես նախկին ճորտ, գուցե արդարացվի նրա անսահման ատելությունը դեպի հարստահարություններն ու կամայականությունները, հարազատ որդուն անգամ չխնայելու դրամատիկական պատկերը։ Այնուամենայնիվ, անսովոր համարձակ ու քաջ լինելով որպես լեռնցի աշխատավոր, նույնին ավելի շատ նման է 20-րդ դարի գյուղական, ճիշտը՝ ռուս կազակության շրջանից ելած հեղափոխականին, քան թե ամբողջ կյանքում ճորտ եղած, մի կտոր հող երազող 18-րդ դարի հայ գյուղացուն։

Սերո Խանզադյանի վեպում պատկերված է հայ ժողովրդի կյանքի մի այնպիսի ժամանակաշրջան, երբ նա ոչ թե մեկ կամ երկու հզոր պետության համար էր դարձել կովախնձոր, որպեսզի ընտրեր նրանցից մեկի հովանավորությունը կամ ինքնուրույն դիմադրություն, այլ առաջ էր եկել մի երրորդ տերություն, որի տիրապետությունը հայ ժողովուրդն ընտրում էր կամավոր կերպով, ոչ թե որպես չարյաց փոքրագույնը, այլ որպես իրական և միակ փրկությունը և ազատությունը։ Պատմագրության մեջ և պատմավեպերում հայ ժողովրդի համակրանքը դեպի Ռուսաստանը շատ անգամ բացատրված է կրոնների, «հավատի» նույնությամբ։ Սերո Խանզադյանը չի բավարարվել այդ բացատրությամբ։ Հարցը քրիստոնյա ազգերի կրոնական հավատի միասնության մեջ չէ միայն. Եվրոպական ազգերը՝ Անգլիան, Ֆրանսիան նույնպես, վերջիվերջո, քրիստոնյա ազգեր էին, բայց հենց նրանք էին դրդում մահմեդականներին՝ կոտորել քրիստոնյա փոքր ազգերին։ Հեղինակն այստեղ ավելի սո՛ւր և որոշակի է դրել հարցը։ Եթե ռուս թագավորները կարողանային իրենց զորքով մտնել Հայաստան, ապա նրանք ոչ թե կրնաջնջեին հայերին, այլ, ընդհակառակը, կաշխատեին նպաստել այդ ժողովրդի բարգավաճմանը, որովհետև նրանց տերության շահերի համար այդ էր նպաստավորը և ձեռնտուն։ Իսկ հայերը, որ արդեն ճաշակել էին թե՛ Պարսկաստանի և թե՛ Թուրքիայի տիրապետությունը, շահագրգռված էին նրանց թույլացմամբ և Ռուսաստանի ուժեղացմամբ։ Նրանք պատրաստ էին օգնել Ռուսաստանին՝ տապալելու իրենց դարավոր թշնամիներին արևմուտքում և հարավում։ Այստեղ կար ոչ թե հավատի, այլ տնտեսական ու քաղաքական շահերի համապատասխանություն։

Բայց այս գործոնը համարելով հիմնականը, Սերո Խանզադյանը ուշադրության է առել նաև հարցի մի այլ կողմը։ Հայերի համակրանքը դեպի ռուսները բխում էր նաև ռուս ժողովրդի ազգային յուրահատուկ բնավորությունից։ Տափաստանների այդ մեծ ժողովուրդը, որ բազմիցս կռվել ու հաղթել էր օտարազգի զավթիչներին, իր հերթին համակրությամբ էր վերաբերվում ստրկացված փոքր ժողովուրդներին։ Թագավոր ու իշխան լինելով հանդերձ, ռուս զորավարները, վերջիվերջո, ինչ-որ չափով արտահայտում էին ռուս աշխատավոր ժողովրդի այդ տրամադրությունները և վերաբերմունքը դեպի շատ տառապած, միշտ ֆիզիկական բնաջնջման վտանգին ենթակա փոքր հայ, վրացի և ադրբեջանական իրենց հարևանները։ Ռուսաստանն, իր նվաճողական քաղաքականությամբ հանդերձ, դրական դեր էր կատարում արևելքի ժողովուրդների կյանքում։ Մարքսի այս միտքը գեղարվեստական արտահայտություն է գտել «Մխիթար սպարապետ» վեպում։ Վիպասանն ընթերցողին տանում է Թուրքիայի Բարձր դուռը, ռուսական դեսպանատուն, պարսկական շահի պալատը և թուրքական զորքերի համբարները, Կասպից ծովի ափերում տեղավորված ռուս գեներալների և նրանց հրամանատարության տակ գտնվող հայկական գրնդերի վրանները։ Ոչ միայն Հայաստանում տեղի ունեցող անցքերը, այլև դրանց արձագանքները ու հետևանքները, ազդեցությունը շահագրգռված պետությունների պալատներում և դիվանագիտական աշխարհում,—այդպիսի լայն ընդգրկումների է հասնում «Մխիթար սպարապետ» վեպը և մարմնավորում այդ իրողությունը։

Եվ հենց այստեղ էլ վեպն ավելի է խորանում իր գաղափարական հունի մեջ։ Նույնիսկ ռուս թագավորն ու նրա բարյացակամ զորավարները, իրենց հզորությամբ հանդերձ, չեն կարող անկախություն տալ հայ ժողովրդին, նույնիսկ նրանք նախ և առաջ իրենց սեփական շահերին են հետամուտ և գերադասում են փոքր ժողովրդի պատճառով չփչացնել իրենց հարաբերությունները մեծ տերությունների հետ։ Ժողովրդի մարդու շուրթերով են ասված դառնության այն խոսքերը, որ բնորոշում են թագավորների վերաբերմունքը դեպի փոքր ժողովուրդները։ Ծայրահեղ աղքատ, ճորտ նույնին, որ Մխիթար սպարապետի շնորհիվ ազատվել է ճորտությունից, դարձել զինվոր, հարցնում է. «Վայ՜է մի աշխարհական թագավորի խաբել փոքրիկ ժողովուրդներին, որոնք իր փեշն են բռնել, իր հույսին ապավինել, հը՞»[4]։ Միակ ճանապարհը՝ ամենադժվար, ամենից շատ զոհեր պահանջող, բայց միակ ճիշտ ճանապարհը՝ դարձյալ դիմադրու-

4 Նույն տեղում, էջ 256։

թյունն է, ոչ անպայման «նահատակություններ», այլ խելացի, անձնվեր, անկոտրում դիմադրություններ, հաշվենկատ, պատմական հանգամանքների դգացողությամբ և բոլոր ուժերի ճիշտ օգտագործմամբ կազմակերպվող համառ պայքարը։

Այդ պայքարի հաջողության գրավականը ոչ միայն մելիքների միաբանության, զորավարների փորձառության ու քաջության, զորական ուժի մեծության մեջ է, այլև ժողովրդի, աշխատավորական լայն խավերի կամավոր մասնակցության, նրանց ոգու, տրամադրությունների մեջ։ Պատրաստ են, արդյոք ժողովուրդը, աշխատավոր գյուղացիությունը, շինականը, պատերազմի դաշտ ելնել ուժեղ թշնամուն դիմադրելու համար։ Փոքր ժողովուրդների կյանքում այս հանդամանքն առանձին կարևորություն ունի, որովհետև ժողովրդի փոքրաթիվության հետևանքով փոքրաթիվ է նաև կազմակերպված զորքը։ Առանց ժողովրդական աշխարհազորի, կամավոր ջոկատների, անհնար է պատերազմել։

Հատուկ ուշադրություն է դարձված քաղաքների, մասնավորապես Երևանի, Ագուլիսի պաշտպանության ժամանակ ժողովրդական ջոկատների, ժողովրդական դեկավարների մասնակցությանը։ Ստեղծված են ժողովրդից ելած հրամանատարների կերպարներ (Կառլիկ Հովհաննես, Նսայի և ուրիշներ), որոնք տարբերվում են մյուս հրամանատարներից ոչ միայն պատերազմ մղելու, քաղաքները պաշտպանելու իրենց ինքնահնար միջոցներով, այլև հոգեբանությամբ։ Նրանք ընտանիքի, զավակների մահը գերադասում են ստրկությունից, բռնաղատությունից ու անպատվությունից։ Կառլիկ Հովհաննեսը քաղաքի անկման վերջին պահին սեփական ձեռքով պայթեցնում է այն տունը, որտեղ պատսպարված է իր ընտանիքը։

Թե՛ կերպարների և թե՛ քաղաքների պաշտպանության ձևերի միջոցով ցույց է տրված նկարագրված ազատագրական կռվի ժողովրդական բնույթը։ Նույնիսկ «Վարդանանքի» մեջ չենք հանդիպում ավանների, ամրոցների պաշտպանության այնպիսի հանգամանալից պատմական պատկերների և ժողովրդի մասնակցության խորը և լայն գեղարվեստական բացահայտման։

«Մխիթար սպարապետը», որպես պատմավեպ, հարազատ է մնացել այդ ժանրի նաև հետևյալ առանձնահատկություններ. հեղինակը զարգացնում է սյուժեն և բնավորությունները ոչ միայն պատմական քաղաքական անցքերի պատկերման, իր հիմնական կոնցեպցիայի զարգացման ուղղությամբ, այլև առիթը բաց չի թողնում ժամանակի տնտեսական կյանքի պատկերն ստեղծելու համար։ Այստեղ էլ եթե Մհրո խանդաղյանը լիապես նորարար չէ, ապա համենայն դեպս հետևողական, պատմական իրականությանը գեղարվեստական զգեստ հագցնելու մեջ հմուտ ու գիտակ գրող է։ Խոսելով, օրինակ, «Հարսենյաց մեծ ավաղը» պարսիկների ձեռքով ավերելու մասին, նա չի սահմանափակվում այդ ավերման «ֆիզիկական» նկարագրությամբ, այլ տեղն ու տեղը գաղափար է տալիս նրա տնտեսական վիճակի մասին, հավատարիմ է մնում պատմական իրականությանը՝ իր բազմակողմանիության մեջ. «Թշնամին վառել էր այնտեղ եղած մետաքսի հարուստ գործատները, շերամանոցները, բամբակի բարդանները, հացը»։ Այս, արտաքուստ հակիրճ, տեղեկությունն արդեն բավական լավ պատկերացում է տալիս ավանի բնակչության զբաղմունքի և նյութական կացության մասին։

Ուրացող Մուրադ Ասլանը բացատրում է, թե ինչու է ցանկանում «ալլահի ստվեր սուլթանը» տիրել Հայաստանին։ Իսկապես, չէ՞ որ այդ զարանակալ թագավորներին հետաքրքրողը Հայաստանի միայն բնության գեղեցկությունները չէին։ «Ոսկու ամրոցներ կան նրանց Ագուլիսում ու Հին Ջուղայում։ Հայ խոջաները կրպակներ ունեն աշխարհի բոլոր շուկաներում։ Նրանք նավեր ունեն ծովերի ու օվկիանոսների մեջ։ Աշխարհի հարուստ քաղաքներից ոսկին հասնում է դեպի այս լեռների ամրոցները։ Այստեղ են խոջաները պահում իրենց ընտանիքները ու գանձերը։ Կապանում պղնձի ելքեր կան, Արցախում հայերն ոսկի ու արծաթ են հանում։ Մեղրին, Ամարասն ու Որդուվարը հարուստ են մետաքսով, պարսկական մահուդով, այս լեռների բարձր արոտներում տարածված են ոչխարի ու տավարի անհամար հոտեր»[5]։

Ահա թե ինչն է շարունակաբար դրդում պարսիկ ու թուրք պարազիտների ախորժակը, որոնք կոչվում են թագավորներ, և ահա թե ինչու են նրանք իրենց ընտիր զորքերն ուղարկում ամենավա բուքին Սյունիքի լեռներում մեռնելու։

Վեպում հարուստ և սպառիչ տեղեկություններ կան առևտրական քաղաք Ագուլիսի մասին. մեծահարուստ վաճառականների պալատներ, տասնմեկ վանքերի ոսկեզօծ գմբեթներ, ծածկած շուկայի անհատնում բարիքներ, ակնեղենի ու մետաքսի կրպակներ։ «Քաղաքից փոքր ինչ դուրս» Թովմա առաքյալի վանքն է, որի «մայր տաճարի դուռը զարդարված էր փղոսկրով, իսկ գմբեթին շողշողում էր ոսկի վիթխարի խաչը։ Թովմայի վանքից պակաս հարուստ ու շքեղ չէին նաև մյուս

5 Նույն տեղում, էջ 21։

6 Նույն տեղում, էջ 411։

տասը վանքերն ու տաճարները։ Քաղաքի նեղ փողոցներում, քարե բաց նավերի միջով օր ու գիշեր վազում էին բազմաթիվ քահրեզների սառնորակ ջրերը»[7]։ Հեղինակը Ագուլիսի համար մղվող ճակատամարտերը կարծես հիմնավորում է նրա տնտեսական նշանակալից գերով՝ այդ ժամանակաշրջանում։ «Աշխարհի բոլոր ծայրերում հոչակ էին վայելում Ագուլիսի ճերմակ բուրգը, բամբակը, բարակ չիթը, չոր միրգը, ընտիր մետաքսը, դույնզգույն ու նուրբ կաշիները, որից նույնիսկ Եվրոպայի արքաներն էին կոշիկներ կարել տալիս իրենց համար։ Աշխարհի շուկաներում հայտնի էին Ագուլիսի կերպասը, գեստորով զարդարած այծի մորթին, գոհարեղեն զարդերը, ծաղրագին ակնեղենը»[8]։

Վեպը ընթերցողին հավաստի տեղեկություններ է տալիս 18-րդ դարի Սյունիքի և Արցախի, Երևանի և մյուս դավառների ոչ միայն տնտեսական կյանքի, բնական հարստությունների, քաղաքական կացության, այլև կենցաղի, ապրելակերպի մասին։ Պատմելով Թոմա հարյուրապետի և Գոհարի Ագուլիս մտնելու մասին, վիպասանը չի մոռանում նշել, թե այդ քաղաքի կանայք ինչպիսի զգեստներ էին կրում. «ոսկեկար չիթիներ, առանց քթակալների, կրծքերի վերին մասերը բաց»[9]։ Կամ մի՞թե պակաս հետաքրքիր է, թե Ագուլիսի բնակիչները 18-րդ դարում ինչպես էին վերաբերվում բնակարանների ծաղկազարդմանը, ինչպիսի ճաշակ ունեին. «Գոհարին դուր եկան Ագուլիսի տների մեծագիր պատուհանները, մանավանդ թաղարների մեջ գրած ծաղկաթփերը, նարինջի խոշոր ծառերը, որ արդեն տներից հանել, դրել էին պատշգամբներում»[10]։

Պատկերվող ժամանակաշրջանի բարքերի ու հասկացողությունների մասին լայն պատկերացում են տալիս մանավանդ Դավիթ Բեկի թաղման արարողության նկարագրությունը. Վարդ-խաթունի կազմակերպած ճաշկերույթի պատկերները։

Պատմականորեն թերի կլիներ «Մխիթար սպարապետ» վեպը, եթե ընթերցողը նրա էջերում հարուստ տեղեկություններ չգտներ պատերազմող կողմերի զորքերի կառուցվածքի, զինտավորման, զենքի տեսակների և պատերազմելու մեթոդների մասին։ Վեպից կարելի է ստույգ իմանալ, թե թուրքական ինչպիսի բանակ, ինչպիսի կազմով և ինչ զենքով էր հարձակվում օրինակ, Երևանի վրա, ինչ ուժերով և ինչպես էր պաշտպանվում Երևանը, ինչպիսի կորուստներ եղան երկու կողմից, կամ ինչ քանակությամբ զորքով էին հարձակվում թուրքերը Հալիձորի վրա, ինչ կորուստներ կրեցին, ինչ զենքերով էին կռվում, և հայերը ինչպես ոչնչացրին թուրքական բանակի վիմակործանը։ Բաֆֆին նույնպես «Դավիթ Բեկի» մեջ տալիս է այդ բնույթի տեղեկություններ։ Բայց դրանք թռուցիկ են, և հենց Բաֆֆու խոստովանությամբ՝ ոչ լիովին ճիշտ, «չափազանցված», որովհետև նրա ժամանակներում այդ դեպքերին վերաբերող աղբյուրները խիստ սահմանափակ էին, եղածները չկային գրողի տրամադրության տակ։ Ուրիշ են պայմանները այժմ։ Սերո Խանզադյանը «Մխիթար սպարապետը» գրելու համար հնարավորություն ուներ օգտագործելու շատ գրքեր ու նյութեր, որոնք խնամքով հավաքված են մեր մասսայական և գիտական գրադարաններում ու արխիվներում։ Եվ ահա հեղինակը մանրակրկիտ ուսումնասիրություն է կատարել, կարդացել է ոչ միայն անմիջականորեն Սյունիքի ապստամբության վերաբերյալ գրականությունը, այլև դրան նախորդող ժամանակաշրջանի, ինչպես նաև այդ դեպքերի հետ կապ ունեցող պետությունների պատմական կացության ու հարաբերությունների մասին աղբյուրները։ «Մխիթար սպարապետը» պատմավեպը գրելու համար հեղինակի ուսումնասիրած գրականության համառոտ ցանկը, ինչպես դա ցույց են տալիս նրա ձեռագրերի վրա կատարված առաջին դիտումները, հետևյալն է. Առաքել Դավրիժեցի—«Պատմություն Առաքել վարդապետի Դավրիժեցվո. Սակս դիպվածո Հայաստան գավառին Արարատյա և մասին Գողթան գավառի», Հասան Ջալալյան Եսայի—«Պատմություն կամ հիշատակ ինչ ինչ անցից դիպելոց աշխարհին Աղվանից». Նույն հեղինակի՝ «Պատմություն համառոտ Աղվանից երկրի» գիրքը, Աբրահամ Կրետացի կաթողիկոս—«Պատմագրություն անցիցն յուրոց և նատր շահին Պարսից», Սմբատյան Մեսրովբ արքեպիսկոպոս—«Տեղեկագիր Գեղարքունի ծովագարդ գավառի», Աբրահամ Երևանցի—«Պատմություն պատերազմացն 1721—1736», Բարխուդարյան Մակար եպիսկոպոս—«Արցախ», նույն հեղինակի՝ «Պատմություն աղվանից»..., Շահումյան Ստեփաննոս—«Դավիթ Բեկ», Հովհաննիսյան Աշոտ—«Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», Լեո—«Հայոց պատմություն» երրորդ հատոր։ Վիպասանը կարդացել է նաև Պետրոս Մեծի արշավանքների, Օսմանյան կայսրության պատմության, Աղվանների պատմության վերաբերյալ մեծ քանակությամբ այլ նյութեր, ուսումնասիրել է Սյունիքի, Ղարաբաղի, Գողթանի ժողովրդական զրույցները Դավիթ

7 Նույն տեղում, էջ 427։

8 Նույն տեղում, էջ 428։

9 Նույն տեղում, էջ 561։

10 Նույն տեղում։

Բեկի կռիվների մասին, ծանոթացել է պատմական հուշարձաններին, վիմագիր արձանագրություններին, շրջել է բոլոր այն վայրերը, որոնք կապ ունեն վեպում նկարագրվող դեպքերի հետ և գտնվում են Հայաստանում և Անդրկովկասում։

Բաֆֆին «Դավիթ Բեկի» ավարտումը հետաձգել է Սյունիքում ճանապարհորդություն կատարելու և մոտիկից այդ գավառներն ուսումնասիրելու նպատակով, որը նրա ժամանակներում դժվար կատարելիք մի խնդիր էր։ Սերո Խանզադյանը ոչ միայն նման դժվարության առաջ չէր կանգնած, այլև Սյունիքում ծնված ու մեծացած լինելու պատճառով քաջ ծանոթ էր ոչ միայն այդ վայրերին, այլև մարդկանց հոգեբանությանը, տրադիցիաներին։ Նրան ոգեորել են պատմական հերոսամարտերը, ոչ միայն որպես այդպիսիք, այլև որպես հարազատ ծննդավայրի, իր նախնիների հերոսական բնավորությունների ու գործերի կենդանացման շարժառիթ։ Սերո Խանզադյանի բանավոր խոստովանությամբ պատմավեպ գրելու գաղափարը նրա մեջ ծագել է Հայրենական պատերազմի ժամանակ, երբ հեղինակը զինվոր էր, ապա մարտկոցի հրամանատար՝ Վոլխովի և Լենինգրադի ռազմաճակատներում։ Նրա հանդիպումը զինվոր Իշխան Դավթյանի հետ, որը պատերազմից առաջ Զանգեզուրում հանքափոր էր և որին կոչում էին «Դավիթ Բեկի թոռ», բորբոքել է ապագա վիպասանի երևակայությունը հայրենի Սյունիքի հերոսամարտերի պատկերներով, ոգեշնչել է դրիչ վերցնել պատմության արխիվներից մեկ անգամ էլ հանելու այդ մարտերի հերոսներին, բնթերցող մասսաների առաջ դնելու զարմանալի հանդուգն, ազատասեր ու քաջ մարդկանց դիմանկարներն ու գործերը։

Բնության պատկերների տեսակետից անցյալի հայ պատմավեպը համեմատարար համեստ է, եթե նկատի չունենանք «Վերք Հայաստանին»։ Կարծես թե վեպերի ստեղծման ժամանակը հնարավորություն չի տվել շատ ծավալվել, շեշտակի թելադրել է ժողովրդի անմիջական հոգսերի առարկա հարցերը բարձրացնել և սրել գաղափարական կողմը, ինչպես, օրինակ, Բաֆֆու պատմավեպերը։ Մինչդեռ Սերո Խանզադյանը հնարավորություն է ունեցել տալ նաև բնության շքեղ պատկերներ, ձուլելով դրանք պատմական անցքերի ընթացքին և հերոսների տրամադրություններին։

Այս վեպի մեթոդական-ոճական առանձնահատկություններից մեկն էլ էպիկականի և դրամատիկականի հաջող զուգորդումն է։ Դրամատիզմը հստակորեն նկատելի է Մխիթար սպարապետի և Գոհարի սիրո, Մխիթարի կնոջ, Տեր-Ավետիսի հոգեբանական էվոլյուցիայի պատկերներում։ Այդ է, թերևս, պատճառը, որ լինելով ծավալուն պատմավեպ, «Վարդանանքից» հետո սա նույնպես արժանացավ բեմ ելնելու պատվին։

«Մխիթար սպարապետ» պատմավեպը լայնացրեց ու խորացրեց այն հունը, որը բացել էր հայ պատմավեպը, որպես սոցիալական, ռեալիստական վեպ։ Այդ երկը դարաշրջանի լայն ընդգրկման, հասարակական հարաբերությունների խորը վերլուծության երկ է, համարձակ և անկեղծ ներշնչանքով գրված վեպ-հերոսապատում, որը առաջընթաց քայլ հանդիսացավ սովետահայ պատմավեպի մեջ։

З. О. Гукасян

ИСТОРИЧЕСКИЙ РОМАН «МХИТАР СПАРАПЕТ»

Резюме

В период Великой Отечественной войны, а также в послевоенные годы наблюдается развитие советского армянского исторического романа. Наряду с романами Д. Демирчяна «Вардананк», С. Зоряна «Царь Пап», заложившими основу развития нового исторического романа, вышел в свет целый ряд произведений этого жанра.

Автор статьи выделяет из них роман Серо Ханзадяна «Мхитар спарапет» и вскрывает некоторые его особенности. Основная концепция этого романа о целях и исходе освободительной борьбы — более реальная и жизненная, чем концепция «самопожертвования», лежащая в основе некоторых других исторических романов. «Мхитар спарапет» глубже вскрывает социальные корни освободительного движения и особенности классовых отношений данного периода (первая половина 18-го века), правдиво и ши-

роко изображает отношения великих держав к малым народам, основы дружбы русского и армянского народов.

Автором созданы реальные образы деятелей освободительного движения и, в частности, видного полководца и государственного деятеля—Давид Бека. По-новому изображены противоречия «отступника» в лице Тер-Аветиса.

В романе широко показаны экономические условия данного периода, средства ведения войны, особенности борьбы народного ополчения.

Хотя отдельные места романа носят описательный характер и автор отходит от художественной правды, в целом это произведение можно оценить как достижение в развитии советского армянского исторического романа.